9 հունվարի 2004 թվականի N 2-Ն

«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 34 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները եւ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» N 1-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը որոշում է.

1. Սահմանել «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի հետեւյալ սակագները՝

ա) ամսական մինչեւ 10,0 հազար նորմալ խորանարդ մետր սպառում ունեցող սպառողների համար՝ 59,0 հազար դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝ սպառված յուրաքանչյուր 1000 նորմալ խորանարդ մետր բնական գազի դիմաց,

բ) ամսական 10,0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառում ունեցող սպառողների համար՝ 79,1 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝ սպառված յուրաքանչյուր 1000 նորմալ խորանարդ մետր բնական գազի դիմաց:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի նոյեմբերի 29-ի «Բնական գազի սակագների մասին» N 34 որոշման 1-ին կետի 1.1 ենթակետը, 1-ին կետի 1.2 եւ 1.3 ենթակետերի ա/ եւ բ/ պարբերությունները, 2-րդ եւ 3-րդ կետերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2004 թվականի մարտի 1-ից: